ՔԱՂԱՔԱՑԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի ղեկավարի 2017 թվականի հունվարի 17-ի ընդհանուր ժողովի արձանագրությունից

Օրակարգ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի ղեկավար Վահե Գրիգորյանի 2016 թվականի ընթացքում կատարված աշխատանքների տարեկան հաշվետվություն

Ժողովին մասնակցում էին Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիրի մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ՝ Գևորգ Գևորգյանը, համայնքապետարանի և բուժ. ամբուլատորիայի աշխատակիցները, ավագանու անդամները և համայնքի թվով 34 բնակիչներ:

Համայնքի ղեկավարը ներկայացրեց 2016 թ-ի ընթացքում կատարված աշխատանքները և համայնքի բնակիչների ուշադրությունը հրավիրեց այն փաստին, որ համայնքի բնակչությունը և համայնքապետարանի աշխատակիցները ջանացել են մեր համայնքի սեփական եկամուտների գանձումները հասցնել բարձր մակարդակի վրա: Նշվեց, որ համայնքը սեփական եկամուտների մասով տարեկան պլանը կատարել է 94.6 %-ով, հողի հարկի մասով 71.7%, գույքահարկի մասով՝ 93.7%: Հարկային պարտավորությունների թերացումը կապված է եղանակային անկանխատեսելի փոփոխությունների հետ և բնակչության եկամուտների սղության հետ: Ինչպես և խոստացվել էր համայնքի ղեկավարի կողմից, քայլ առ քայլ բնակիչների հետ միասին, թեև փոքր բայց հաստատուն քայլերով շարժվում ենք առաջ և լուծում տալիս համայնքի խնդիրները: Սակայն, չնայած մեր բնակչության հարկային պարտավորությունների կատարմանը, համայնքում դեռ կան գերակա չլուծված խնդիրներ, որոնց լուծման շնորհիվ համայնքի սոցիալ-տնտեսական և մշակութային վիճակը կարող է բարելավվել: Դրանք մեր համայնքի հիմնախնդիրներն են, որոնք դեռևս լուծում չեն ստացել, սակայն հույսը երբեք չպետք է կորցնել և համախմբված ուժերով լուծում տալ իրենց համայնքի խնդիրներին:

Իսկ համայնքի հիմնախնդիրների մասին համայնքի ղեկավարը միշտ կտեղեկացի մարզպետարանում և կփորձի գտնել այլ աղբյուրներ դրանց լուծում տալու նպատակով:

Համայնքի հիմնախնդիրները

1. Գյուղի կենտրոնական ասֆալտապատ ճանապարհի քարուքանդ վիճակը:
2. Ոռոգման ջրի ցանցի կառուցումը:
3. Մշակույթի տան շենքի վերանորոգումը:

Արմավիրի մարզի Գրիբոյեդով
համայնքի ղեկավարի կիսամյակային
գործունեության հաշվետվություն
(2016թ-ի հուլիս-դեկտեմբեր ամիսների)

1. Քաղաքացիների իրավունքների պաշտպանության բնագավառում

2016թ. հուլիս-դեկտեմբեր ամիսների ընթացքում համայնքապետարան է դիմել համայնքի թվով 69 բնակիչ, որից 59-ը գրավոր, դիմումատուների հարցերին տրվել է լիարժեք պատասխան: Ստացվել է 110 գրություն և առաքվել է թվով 96 գրություն: Համայնքապետարանը նոտարական գրասենյակում, Ք.Կ.Ա.Գ.-ի բաժնում, անձնագրային բաժնում,կադաստրի տարածքային ստորաբաժնում միջնորդությամբ հանդես է եկել համայնքի բնակիչների օրինական շահերը պաշտպանելու նպատակով:

Կատարվել է համայնքապատկան հիմնարկներում ամենամյա գույքագրման աշխատանքներ:

Կայացել է համայնքի ավագանու 3 հերթական և 6 արտահերթ նիստ, որոնք ներկայացվել են մարզպետարան: Համայնքի ղեկավարի կողմից կայացվել է տարբեր բնույթի 8 որոշումներ, որոնք նույնպես ներկայացվել են մարզպետարան:

Համայնքում կազմակերպվել է միջոցառումներ՝ Անկախության տոնի, սեպտեմբերի 1-ի և ուսուցչի տոնի կապակցությամբ:

2. Ֆինանսների բնագավառում

Կազմվել և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացվել համայնքի տարեկան բյուջեի նախագիծը, օրենքով սահմանված կարգով ապահովել և տնօրինել է համայնքի բյուջեի մուտքերը և նպատակային օգտագործումը: Հաշվետու ժամանակահատվածում հավաքագրվել և մուտքագրվել է գույքահարկի մասով՝ 2 305 000 դրամ, հողի հարկի մասով՝ 4 360 600 դրամ և վարձակալական հողի մասով՝ 751 000 դրամ, տեղական տուրք՝ 20 000 դրամ: Համայնքապետարանը աշխատակազմի աշխատակիցների աշխատավարձերի, սոց վճարների և եկամտահարկերի գծով հաշվետու ժամանակաշրջանում ոչ մի պարտք չունի:

ծանուցագրերը ժամանակին հասցնում է հասցեատիրոջը և հետևում է, որ ժամանակին ներկայանան զինկոմիսարիատ: Զին ծառայությունից խուսափողների թիվը հասցվել է նվազագույնի, ինչպես նաև աշխատանքներ է տարվում նախկինում զինծառայությունից խուսափողների հայտնաբերման և զինկոմիսարիատ ներկայացնելու գործում:

Աջակցվում և ուշադրության կենտրոնում են պահվում պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծումը: Աշխատանքներ են տարվում երիտասարդության շրջանում ռազմահայրենասիրական դաստիարակության գործում:

4.Քաղաքաշինության և հողօգտագործման բնագավառում

Անմիջական վերահսկողություն է սահմանվում համայնքի հողօգտագործողների նկատմամբ տարածքները նպատակային օգտագործման ուղղությամբ: Մասնագետների մասնակցությամբ տրվել է անվճար խորհրդատվություն բույսերի պաշտպանության հարցում:

Մանկապարտեզի խաղահրապարակի ցանկապատման աշխատանքների համար հատկացվել է 873 000 ՀՀ դրամ:

5. Կոմունալ տնտեսության և բարեկարգման բնագավառում

Համայնքում կատարվում է ամենշաբաթյա աղբահեռացում, որի համար կնքվել է ծառայությունների ձեռք բերման պայմանագիր /տարվա կտրվածքով/ 1 980 000 ՀՀ դրամ արժողությամբ:

Գրիբոյեդով համայնքի աղբավայրում աղբի մաքրման աշխատանքների համար հատկացվել է 300 000 ՀՀ դրամ:

Գրիբոյեդով համայնքի մշակույթի շենքի առաջնային մասի սալիկապատման աշխատանքների ձեռք բերման համար հատկացվել է 985 500 ՀՀ դրամ;

Համայնքի Տ.Պետրոսյան փողոցի կոյուղատարի վերանորոգման նպատակով նոր խողովակների ձեռք բերման համար հատկացվել է 250 000 ՀՀ դրամ:

Համայնքի Սևակի փողոցի խմելու ջրի պոմպի և խողովակների ձեռք բերման համար հատկացվել է 290 400 ՀՀ դրամ:

Համայնքի Շիրազի փողոցի խմելու ջրի խողովակների ձեռք բերման համար հատկացվել է 93 000 ՀՀ դրամ:

Կենտրոնական փողոցի լուսերի փոփոխման համար ծախսվել է 48 680 ՀՀ դրամ:

Գյուղապետարանի կողմից գյուղամիջյան ճանապարհների հարթեցման աշխատանքներ:

7. Առևտրի և սպասարկման բնագավառում

Հսկողություն է սահմանվել արագ փչացող սննդի և առևտրային կանոնների խախտման նկատմամբ, ինչի մասին պարբերաբար տեղեկատվություն է ներկայացվում մարզպետարան:

Բացառվել է փողոցային վառելանյութի վաճառքը:

8. Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում

Համայնքապետարանը համայնքի ավագանու որոշմամբ համայնքի ուսանողներին որպես ուսման վարձի աջակցություն և ճանապարհածախս տրամադրել է 110 000 ՀՀ դրամ:

Համայնքի մանկապարտեզի ֆինանսավորման համար հատկացվել է 6 972 000 ՀՀ դրամ:

Գյուղի սկաուտներին Բյուրականի բանակավայրում Էջմիածնի «Վաչե» միավորի բանակումի ճանապարհածախսի աջակցության համար հատկացվել է 50 000 ՀՀ դրամ:

Հայաստանի Հանրապետության Անկախության 25-ամյակի կապակցությամբ միջոցառման կազմակերպման համար հատկացվել է 110 000 ՀՀ դրամ:

Մանկապարտեզի համար ձեռք է բերվել գույք 523 770 ՀՀ դրամ արժողությամբ: Առաջին դասարանցիներին և դասվարին սեպտեմբերի 1-ի կապակցությամբ գյուղապետարանի կողմից նվերներ գնելու համար հատկացվել է 180 000 ՀՀ դրամ:

Ուսուցչի տոնի կապակցությամբ գյուղի ուսուցչական կոլեկտիվին նվերներ գնելու համար հատկացվել է 129 900 դրամ:

Ամանորի կապակցությամբ համայնքի նախադպրոցական տարիքի երեխաներին երեխաներին նվերներ գնելու համար հատկացվել է 95 000 ՀՀ դրամ:

2016 թվականի նորածինների ընտանիքներին նվերներ գնելու համար հատկացվել է 99 000 ՀՀ դրամ:

9. Առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և սոցիալական ծառայության բնագավառում

Բուժ. անձնակազմի և գյուղապետարանի մասնակցությամբ հսկողություն է սահմանվել խմելաջրի վթարների, խորքային հորերի քլորացման և կենցաղային աղբի հեռացման հարցում: Համաճարակների կանխարգելման նպատակով կատարվում է ամենօրյա բակայցեր և տարվում է բացատրական աշխատանքներ: Համայնքում հրավիրվում են բժիշկ - մասնագետներ ազգաբնակչությանը ստուգելու, համապատասխան անվճար բուժումներ և խորհուրդներ տալու նպատակով:

Համայնքի Բուժ. ամբուլատորիային հատկացվել է 100 000 դրամ ընթացիկ դրամաշնորհ առաջին օգնության դեղորայքի և հոսանքի ծախսերի խնդիրները հոգալու համար:

Սոցիալապես 46 անապահով ընտանիքներին տրվել է 1 300 000 ՀՀ դրամ որպես օգնություն:

10. Գյուղատնտեսության բնագավառում

Տարածքային վիճակագրական վարչություն է ներկայացվել ամսական հաշվետվություն ցանքաշրջանառության, ինչպես նաև պտղատու և խաղողի այգիների ստացված բերքի, առկա գյուղտեխնիկայի վերաբերյալ հաշվետվություններ:

Համայնքում համաձայն գրաֆիկի կազմակերպվում է անասունների և թռչունների հակահամաճարակային պատվաստումներ:

Հիմնախնդիրներ

1. Գյուղի կենտրոնական ասֆալտապատ ճանապարհի քարուքանդ վիճակը:
2. Ոռոգման ցանցի կառուցում:
3. Մշակույթի տան շենքի վերանորոգումը:

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

« 14 » հունվարի 2017թ.